

ՀԱՄԱԷԼՆԻ ՂԱԶՎԵԼՆ

**ՀԱՄԱՌՈՏ
ՅՈՒՅԱԿ ԶԵՌԱԳՐԱՅ
ՂԱԼԱԹԻՈՅ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ
ԵԿԵՂԵՑԻՈՅ**

**Հրատարակեց
Յ. ԶԻՒՐՏԵԱՆ**

**ՎԵՆԵՏԻԿ-Ս. ՂԱԶԱՐ
1969**

ՅՈՒՅԱԿ ԶԵՌԱԳՐԱՅ

Ղ.Ա.ԱԹԻՈՅ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԵԿԵՂԵՅԻՈՅ

Կազմեց՝ Հ. ԱՐՍԷՆ Ղ. ՂԱԶԻԿԵԱՆ

Տարիներ առաջ, Կ. Պոլսէն գնած էի զանազան գրութեանց եւ ձեռագիր տետրակներու ղէջքը, որուն մէջ վաստակաւոր եւ րազմարդիւն Ղենետիկեան Մըխիթարեան մեր շատ սիրելի Հայր Արսէն Ղազիկեանի կողմէ կազմուած՝ Ղալաթիոյ Զեռագրաց ցուցակը գտնելու ուրախութիւնն ունեցայ:

Ղալաթիոյ Հնադարեան Ս. Լուսաւորչի եկեղեցին, ինչպէս ծանօթ է, ասկէ քանի մը տարիներ առաջ՝ Կ. Պոլսոյ նոր քացուելիք ճանապարհներու ցանցին պատճառով՝ ի Հիմանց քանդուեցաւ, որուն տեղ՝ հայ Հին ճարտարապետութեան Հետեւեւթեան նոր տաճար մը շինուեցաւ: Հին եկեղեցւոյն մեծածախ եւ արժէքաւոր կուտնահայ յախճապակեայ սալիկներէն, որոնք եկեղեցւոյն ներքին որմերը կը զարդարէին, յայտնի չէ թէ ինչ փերկուած է: Եկեղեցւոյն մէջ կը պահուէին արժէքաւոր եւ շահեկան ձեռագիրներ, որոնք կ'երեւի թէ ժամանակ մը մինչեւ 61 թուահամար ունեցած են եւ զուցէ աւելի ալ եղած են: Ասկէ տասնեակ մը տարիներ առաջ, առիթ ունեցաւ եղածները տեսնելու, որոնք հազիւ 15 հատ մը կային, թիթեղեայ տուփերու մէջ փակուած. քան մը՝ որ կրնար զանոնք մոխրացնել ու փրճացնել, օդի պակասութեան եւ խոնաւութեան պատճառով, ճիշտ ինչպէս որ պատահեցաւ երկու արժէքաւոր ձեռագիրներու՝ որոնք կը պատկանէին Աղեքսանդրիոյ (Եղիպտոսի) Հայոց եկեղեցւոյն:

Տետրակը՝ րաց վարդազոյն հասարակ թղթեայ կազմով, 15,5×19,5 հրդ. մեծութեամբ, կապուտապիժ քառակուսիներով՝ ճերմակ թուղթ, 41 թերթերէ կը

բաղկանայ, որուն 24թ-էն անդին բոլորովին պարապ: Գրչութիւնը՝ սև մկանով, մանրագիր: Իւրաքանչիւր թերթի երկրորդ էջը պարապ է թողուած:

Արտաքին կողքին վրայ՝ գրչէն իսկ «Ս. Լուսաւորչի եկեղեցւոյ Զեռագիրներու Ցուցակ, կազմուած՝ Հայր Արսէն Ղազիկեանի կողմէ, 5 յուլիս 1920»:

Էջ 1ա. տիտղոսաթերթը՝ գրչէն.

Ցուցակ
Զեռագիր Մատենից
Գտնուց
յեկեղեցւոյ Սրբայն Գրիգորի
Լուսաւորչի
որ
Ի Կալաթա Կ. Պոլսի
Յամի
1920
Կազմեալ
Զեռամբ անպիտան եւ անարուեստ
Գրչի ուրումն
Բուսելոյ յափումս Հանդրին
Անդեղաց

Էջ 2ա. Ունի եռատող ենթախորագիր «Ցուցակ Զեռագիր Մատենից Ս. Լուսաւորչի եկեղեցւոյն»: Եւ կը սկսի ցուցակը:

Կը պակսին քիւ 1. 2. 3 ձեռագիրները:

Թիւ 4

Աւետարան քղթեայ. քուական չունի

Միջակ գիրքով, երկիջեան, բոլորգիր, կանոնաւոր գրչութեամբ, իւրաքանչիւր աւետարանչի նկարներով: Մատթէոսինը կատարեալ է, իսկ միւսները պարզ կար-

մբով : Խորանազարդեր ալ կան : Ճարտար
գրչի գործ , բայց բոլորովին սևեցած եւ
զուեանտ՝ եկեղեցւոյ մէջ յաճախ դործած-
ուելէն :

Ղուկասու աւետարանին վերջերը դրի-
չը կը փոխուի , այսինքն՝ բոլորովին ս-
ւելի կը մանրնայ , յետոյ նորէն նախնա-
կան ձեւը կը ստանայ :

Յովհաննու աւետարանին վերջին էջե-
րը բոլորովին փճացած են խոնաւութենէ :
Յիշատակարան ունի՝ բայց ստացողինն
է , եւ է ՌժԺԵ (1666) թուին : Հուանա-
րար ձեռագիրը քիչ մը աւելի կանուխ
գրուած ըլլալով է :

Կաղմը հաստատուն է , կաշեպատ
տախտակեայ , բայց ինչպէս բսուեցաւ՝
վերջին էջերը բոլորովին փճացած են :

Թիւ 5

Աւետարան մագաղաթեայ ,
քուակամ՝ անյայտ

Փոքրագիր , բոլորովին ընտիր եւ ճաշա-
կաւոր . իւրաքանչիւր Աւետարանի սկիզ-
բը՝ խորաններով եւ ղեղեցիկ զարդարե-
րով : Մէն մի համարի սկզբնատառերը
կարմրաղեղով . իսկ իւրաքանչիւր պտու-
խի առաջին դիրերը մեծ զարդագիր՝ գի-
մացը յուսանցքին վրայ բազմաթիւ ճա-
շակաւոր զարդերով :

Եկեղեցւոյ մէջ շատ տարիներ գործած-
ուելէն՝ բաւականին մաշած , սևեցած ,
բայց յաւ պահուած :

Կողքը՝ տախտակեայ , կաշեպատ :

Յիշատակարանը կ'ըսէ .

«Արդ պրեցաւ սուրբ աւետարանս ի մա-
մանակս հայրապետութեան տեառն (ա-
նունը կը պակսի) Հայոց կաթողիկոսի :
Եւ ի պարոնութեան աստուածաբնի եւ
բարեպաշտի Հէթմոյ... ի ձեռն աւրհ-
մեայն Թորոսի գրչի... ի հռչակաւոր
մայրաքաղաքս Սիւս , ընդ հովանեաւ սրբ-
բուն Թէոդորոսի... Այս էր հին յիշա-
տակարանն... Եղծեալ էր , եւ գոյս հա-
ղիւ կարացաք յարիւնակել... իսկ յետոյ
վերստին նորոգեալ կաղմեցի եւ մեղաւոր
Կաֆայեցի Խապակի Խաչատուր Երէցս...

ի թվականութեանս Հայոց ՌժԺԵ եւ ԺԵ
(1666)» Եւն. :

Ձեռագիրը յետոյ ուրիշ ձեռքերու
կ'անցնի... սակայն բուն ձեռագիրն ի-
շատակարանէն կայ էջ մը , որուն յաջորդ
երկու էջերը արուած ըլլալով՝ վրայէն
գրուած է տարրեր գրչով :

Յիշատակարանին պրիւթեան թուա-
կանը պարունակող մասը կորսուած ըլ-
լալով՝ թուականը յայտնի չէ , բայց ԺԴ .
դարու է , բայց ամենայն հասանակուն-
թեան : Ընտիր գործ :

Կը պակսին քիւ 6. 7. 8. 9. 10. 11.
12. 13. 14. 15 ձեռագիրներ :

Թիւ 16

Աւետարան քրքեայ . քուակամ չունի

Միջակ գիրքով , բաւական ճարտար
գրչութեամբ , իսկ նկարներն ու մանա-
ւանդ խորաններն ու թռչնադրերը եւ
յուսանցքի զարդերը՝ զմայլելի . բայց
մեղք որ գիրքը կաղմելու ժամանակ՝
տխմարաբար յուսանցքը կտրեր են եւ
յուսանցքին զարդերը աղծառել են :
Յայտնի կը տեսնուի որ ծաղկող ուրիշ
անձ եղած է , գրիչը՝ ուրիշ . որովհետեւ
զարդերը առհասարակ՝ թէպէտ են տեղ
տեղ պահուած կամ վնասուած եւ կտրու-
ած , բայց զմայլելի նորութեամբ են
կատարուած : Մատթէոսի աւետարանին
վերջը յիշատակարան մը կայ՝ ուր կ'ըսէ .
«... Յիշատակ է սուրբ Աւետարանին նը-
կարեալ արծաթապատ պատկերս Մղտե-
սի Մկրտիչին կողակցին նաղաչին... Թր-
ւականն Հայոց ՌժԺԴ (1664)ին» :

Ձեռագիրը աւելի հին է , գոնէ զար ու
կէս ետ երթալու ենք :

Արծաթապատ պատկերը կայ թէև կող-
քին վրայ , բայց քանդած տարած են ինչ
ինչ մասեր : Խաչը կայ , չարչարանաց
գործիքներէն ու շրջանակէն պակասներ
կան :

Ընդհանուր միմտակ իսկզ է , կարօտ է
նորոգութեան :

Արժէքաւոր գործ :

Գիրք ճաշու. մագաղաք,
ի քուլիմ Ռձիւկ (1672)

Մեծագիր, սրանչևի գործ մը, դըրուած ի կ. Պոլիս, և ընծայուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն ի Ղայաթիա: Հրաշալի են թէ՛ պրշութիւնը, թէ՛ նկարները և թէ՛ մանաւանդ խորաններու կամարներն ու լուսանցքի զարդերը: Գոյները անթիւար մնայած են՝ ինչպէս և սակին: Սկիզբը կայ Աւետման պատկերը, զիմացը հրաշալի խորանաձև զարդով մը, որով մը զեղեցիկ զրչազրերով: Երկու էջ վերջ՝ Քրիստոսի ծննդեան պատկերը, զիմացը նոյն նման խորանով ու յարակից զեղեցիկ զարդով մը, որուն մէջ կայ՝ շրջանակի մը մէջ՝ Յիսուսի պատկերը, երկրագոյնտը ձեռքը, և զոր ամպարիշտ ձեռք մը մկրատեր է, բայց յետոյ ուրիշ բարերար ձեռք մը տեղն է կայցուցեր:

Բ(արդէն) Վ(արդպետ), 1912ին, այդ մկրատուած էջին ներքեւը՝ անէծք կը կարգայ այդ շորնալիք ձեռքին. իր ըրածն ալ սակայն՝ խօսքը մէջներին՝ դովիլի րան մը չէ, ինքն ալ կը խաթարէ ձեռագիրը. անշատ թզթի մը վրայ կըրնար որոտալ իր այդ նզովքը: Լուսանցքներուն վրայ՝ բացի զարդերէն՝ կան նրկարներ սուրբերու, միւսնոյն ճաշակով ու ճարտարութեամբ: Զատիկի ծրարու լոյսին էջը զարդարուած է զեղեցիկ խորանով մը, ուր կան Յիսուսի և իր աշակերտաց դէմքերը, յարակից զարդերով և թռչնադերով, և յետոյ քանի մը էջ վերջ՝ Զատիկի Յարութեան պատկերը, խորանովն ու զարդովը և թռչնադերովը: Հողեղայտեան էջը նոյնպէս ունի իր յատուկ նկարը, զիմացը խորանովն ու զարդերովը, ևն, ևն:

Շատ կանոնաւոր յիշատակարան մը ունի. զրին է Անտոն Լեւց: Իսկ ստացողն ու նուիրողն է հացեփեաց մահտեսի Այնուոր: Ի վերջոյ կ'ըսէ. «Կատարեցաւ սուրբ գիրքս ի թվ(ին) Հայոց Ռձիւկ

(1672), մարտ ամսոյ Ա (1), օրն ուրբաթ»:

Կազմը կաշկատ տախտակայ՝ հաստատուն, բայց քայքայուած է, և կարօտ բարերար ձեռքի մը օգնութեան, որ զինքը կազմել ու կապել տայ ըստ արժանւոյն: Զեռագրին վերջը կայ իր պահպանակ թերթ մը՝ յունարէն ձեռագիր, նոյնպէս մագաղաթ, զեղեցիկ զրչութեամբ:

Զմայլելի գործ մը, և իր այդ՝ պէտք է խնամով նորոգել ու զօգայ վրան:

Թիւ 17բ

Աւետարան, մագաղաք,
ի քուլիմ Հայոց ՊԶԸ (1439)

Մեծագիր, կազմը քայքայուած և իւրաքանչիւր էջի վարի մասերը նորոգուած՝ կարկտուած. ընտիր ձեռագիր, ոսկեղօծ, այլ շատ գործածութիւն՝ սեւցած, իւղոտած: Սկիզբը տասը կանոններ՝ յատուկ զարդերով: Մատթէոսի և Դուկասու պատկերները կը պակսին, միւսներուն կան. բայց չորս աւետարանիչներն ալ ունին իրենց առանձին էջերը, զեղեցիկ և ճաշակաւոր զարդերով:

Կողքը՝ տախտակայ, հաստատուն, բայց քայքայուած և կարօտ նորոգութեան: Կողքին վրայ խաչ մը՝ չարչարանաց գործիքներով, շրջանակը վնասուած:

Գրին է Մաղաքիա արեղայ, որ և յիշատակարանին մէջ կ'ըսէ.

«... կատարեցաւ ձեռամբ... Մաղաքիա արեղայի, ի Ռեւ (1440) ամի Փրիկին, իսկ ի մերում թուականիս... ՊԶԸ (1439), ի Կաֆայի մայրաքաղաքիս, ի մենաստանն սուրբ Անտոնին»:

Մանօթույնի Յ. Քիւրտեանի. — Նոյն այս ձեռագիրը տեսած է Փիւրպալեմեան՝ Ղայաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, 1870ին նոյնմբեր 11ին, և յիշատակարանին մէջ մտաւ արտագրելով՝ հրատարակած էր իր ՆՕՏԱՐՔ ՀԱՅՈՑԻՆ մէջ, իրր թիւ 125 յիշատակարան, էջ 119-120: Նոյն այս ձեռագրին յիշատակարանը ա-

և իր ընդարձակ հրատարակուած է 1903-ին, ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅԻ մէջ, էջ 341: Լեւոն Ս. Խաչիկեան իր «Ե. ԴԱՐԻ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ»-նե՛րուն մէջ (1401-1450) առնելով Փեր-դաթմեանի հրատարակութեանը՝ ինքն ալ հրատարակած է իրր թիւ 361 յիշատակա-րան (էջ 502): Սակայն կարծելով որ ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅԻ մէջ հրատարակ-ուածը տարբեր յիշատակարան է Փերդա-լմեանի հրատարակածէն, զայն կրկին հրատարակած է իրր թիւ 572 յիշատակա-րան (էջ 511), այսպէս նոյն յիշատակա-րանը իրր Երկու տարբեր յիշատակարան-ներ հրատարակելով:

Աւելորդ չեմ նկատեր այս թիւ 17ր Ա-ւետարանին յիշատակարանը կրկին հրա-տարակել՝ արտագրելով ՀԱՆԴԵՍ ԱՄ-ՍՈՐԵԱՅԻ հրատարակածէն, այսպէսով ամբողջացուցած կ'ըլլանք Հ. Արսէն Չա-ղիկեանի կրճատած յիշատակարանը:

«... կատարեցաւ ձեռամբ... Մաղա-փա արեղայի, ի Ռեն (1440) ամի Փրքի-չին, իսկ ի մերում թուականիս ՊԵՆ (1439) ամի, ի նոյնմբերի է. (7) արն չարաթ, ի չարապետութեան տեառն Գրիգորի րարեպաշտի եւ աստուածասիրի եւ իմաստեոյն, եւ եպիսկոպոսութեան սրբասիրի մեծի տեառն Մաղափայի ի մերում Հոնաց աշխարհին եւ Գաղարեաց նահանգիս, Սալխաթ Ղրիմի եւ Կաֆա-յիս մայրաքաղաքիս, ի մենաստան մեծի սրբոյն Անտոնի եւ Աստուածածնի, ի խնդրոյ պատուական եւ երջանիկ քահա-նային Արքահամի...»:

«Արդ, աւետարանս ազատ արարեայ ե-ղի ի սուրբ եկեղեցիս մեծի սրբոյն Լու-սաւորչի... Եւ որք յանդգնաբար իշխե-լոյ աղապաւ րան ասիցէ խոտորեցուցանել կամելով զաստուարանս ի իշապօնս (Ղա-լաթիս անշուշտ) եկեղեցւոյս՝ նա ըզ-վարձս Կայնի...»: Բիշտակարանին այս մասը որ զերեալ ձեռագրին աղատ-ման մասին կը խօսի՝ անտարակոյս ստա-ցողի մը յիշատակարանն է, որմէ վերջ դարձեալ զրէջն:

«Եւ զիս՝ զաղկազկս եւ փանաքի զրիչս

զՄաղափայն յիշեցէք ի տէր Քրիստոս, ոյորմութիւն հայցելով ինձ, եւ ծնողաց իմոց, հարն իմոյ Եւստշային, եւ մարն իմոյ Աղիդ-Մէլիքին, եւ քիւրն իմոյ Շի-րին-Մէլիքին, եւ Խոթթուպէկին, եւ ա-ւազ եղբարն իմոյ Մաղափա կրանա-ւորին, զղնացեալսն առ Քրիստոս եւ զամենայն աղպականքն իմ՝ զկենդանիս եւ զձանդուցեալսն յիշեցէք ի Քրիստոս, ըզ-մահտեան Մկրտիչն եւ զՂուքեյն մեր ըզ-պարոն իմաւտուն...»:

Թիւ 18

Ճաշոց Գիրք, (քղքեայ)
ի բուիմ ՊԵ (1356)

Մեծաղիր, հսկայ գործ, սքանչելի կաղ-մով եւ հաստատուն: Միակ գործը, որ հակառակ իր հնութեանը՝ մնացեր է մա-քուր, թէ եւ նկարները զուեւատած են: Կր սկսի Աստուածայայտնութեան ճորդա-լոյցի արարողութեամբ: Խորանձեղ դար-դեր կան, թոչնաղբեր, են, են, լու-սանցաղարդելով, կոկիկ եւ ճաշակաւոր, թէ եւ զուեւատած: Թուղթեր շատ գոր-ծածուելն՝ սուցած: Զատկի կանոնը եւս դարդարուն էջ մը ունի՝ խորանձեւ: Իսկ Պենտակոստի կանոնին առջեւ կայ զմայլելի նկար մը, առաքելք նստած ի վերնատանն, մէկ երկուքին դէմքը վնաս-ուած է, եւ էջն ալ վերէն վար ծալուած:

Երկայն յիշտակարան ունի, ուր՝ ի միջի այլոց կ'ըսուի «... կատարեցաւ սա ի թուականիս Հայոց ՊԵ (1356) ի չարա-պետութեանն տեառն Մխթարայ... ի թաղ(աւորութեան) Կոստանդիսնոսի, յաշխարհակալութեան Ծանիպէկ Ղանին, ի հռչակաւոր քաղաքս Սուրբաթ, ի դա-ւառիս Ղրիմ...»:

Բնտոյ կայ ուրիշ յիշտակարան ստա-ցողի՝ Դիտելի է որ յիշտակարանին մէջ մտած ձեռագրին էջը պէտք է երթայ զըր-բին մէջ տնի տեղը՝ ուր ճերմակ թուղթ մը կ'պցուցած են, եւ նախընթաց էջին ըս-տորոտը ի դրուած է, ճիշտ հոն է որ պի-տի մտնէ:

Արմէճաւոր գործ:

ան ալ սկիզբէն եւ վերջէն կը պակսի, որով կարելի չէ բուն թուականը ճշտել, բայց ժե. դարու գործ կը թուի:

Կողքին վրայ արծաթեայ ոսկեղօծ պատկեր մը կայ, լաւ վիճակի մէջ պահուած:

Ձեռագրին ընդհանուր վիճակը լաւ է, տեղ տեղ միայն խոնաւութենէն վնասուած: Մասնաւոր խնամքի կը կարօտի: Թիթեղեայ տուփէն հանելու եւ օդ ու յոյս տալու է: Խոնաւութիւնը մահացութեամբն է՝ ինչպէս ամէն բանի՝ նոյնպէս ձեռագիրներուն ալ:

Ընտիր գործ մըն է:

Թիւ 20թ

Մաշտոց Թղթեայ, քուսկամ չունի

Միջակ գիրքով, միայաբ բոյրղիր, դարդաբերով, եւ զխակարգութիւններ կարմրադեղով: Սկիզբը ցանկ ունի, բայց թույթերը՝ մաշած եւ որդնակեր, դեղնած ու սևեցած շատ գործածուելէն:

Ի վերջիոյս քանի մը տող յիշատակարան կայ, ուր կ'ըսուի թէ «գրեցաւ ձեռամբ... արեղի Առաքել», եւ ապա ուրիշ ձեռքով չարձանակուած եւ արուած, նոյնպէս յաջորդ էջը: Իսկ ամէնէն վերջին էջին մէջ կը կարդանք.

«Եւնեցէք զվերջին կաղճոյն սորա ըստի Սարգիսն...» եւ ի ներքոյ, «Ձեռամբս Պաղոս Եպիսկոպոսի Մեկտինցոյ... թուին ՌԻՈՒ (1572)»: Որմէ կը հետեւի՝ թէ ձեռագիրը թիւ մը աւելի հին բլլալու է: Սկիզբը մաղաղաթեայ թերթ մը երկոթադիր Աստուածաշունչի՝ իբր պահպանակ, իսկ վերջը չունի: Կաղճը հաստատուն՝ կաշկապատ տախտակեայ: Ընդհանուր վիճակը ոչ այնչափ զէշ:

Թիւ 21

Աւետարան քղթեայ

Ի քու(ին) Հայոց ՌԷՆ (1626)

Դիրքը՝ միջակ, բոյրղիր: Իւրաքանչիւր աւետարանիչի պատկերները աւել-

տարաններուն սկիզբը, բայց շատ անճաշակ: Ըլլայ լուսանցքներու, թէ տառիկն էջերու դարդերը՝ համեմատաբար լաւ են:

Գրչութիւնը՝ միայաբ, էթէ ոչ այնքան ճարտար, բայց զէթ կանոնաւոր: Թույթը բոյրղովին սեւցած:

Ի վերջն ունի յիշատակարան՝ ուր կ'ըսուի. «... Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի յաւ եւ յնոտր աւերինակէ, ի յերկիրն էնկէլին, ի վառ ուջ քիլիսին, ընդ Հոյմանաւ Երեք մանկանցն, որ ասի Անանիա, Աղարեա եւ Միսաէյ: Բաւական լաւ վիճակ ունի: Ունի հաստատուն կողք՝ կաշիով եւ տախտակով:

Թիւ 21թ

Մաշտոց Թղթեայ

Ի քու(ին) ՌԻՆ (1576)

Դիրքը՝ միջակ, բոյրղիր, ընտիր եւ միայաբ՝ գրչութիւնը: Սկիզբը կայ ցանկը, իւրաքանչիւր զխակարգութեան առաջին տառերը՝ կարմիրով: Գրքին սկիզբը խորանաձև դարդ մը, եւ յետոյ դարդադրեր, նոյնպէս՝ իւրաքանչիւր նոր կանոնի սկիզբը:

Յիշատակարանը կ'ըսէ, «... եւ... Աւետարանս սարկաւազս սկսեալ կատարեցի զաստուածաբանս գիրքս, որ կոչի Մաշտոց, ի մայրաքաղաքն ի Կէսարիա, ի թմարերութեանս Հայոց ՌԻՆ (1576)»: Ապա տարրեր գրչութեամբ՝ կայ «կանոն խաղող արհնելոյ», եւն, 8 էջ գրութիւն, եւ հետեւ՝ յիշատակարան ստացողին, որ է Սիմէոն քահանայն:

Ընտիր ձեռագիր, բայց շատ խեղճ վիճակի մէջ, քայքայուած, եւ շատ տեղեր որդնակեր: Սկիզբը իբր պահպանակ՝ երկոթադիր Աստուածաշունչի, իսկ վերջը նոյնպէս երկու թերթ մաղաղաթ՝ յունարէն ձեռագիրը: Կարօտի նորոգութեան ի քարերս խնամոց սպորմած ձեռագ:

Թիւ 21դ

Աւետարան մագաղաք, քուակամ ?

Միջակ զիբբով, բոլորդիր, կոկիկ եւ ճաշակաւոր : Սկիզբը կան շատ նկարներ, ինչպէս նաեւ աւետարանիչներու նկարներ, յարակից դարդերով, եւն : Լուսանցադարակներ այ՝ նոյն ճաշակաւոր զրչու-թեմեր :

Կողքին առաջին երեսը՝ արծաթեայ շրջանակ կայ, մէջը քանդակուած պատկերով : Յիշատակարան չունի, որով եւ թուականն անյայտ, բայց 16րդ դարու գործ կը թուի :

Ընդհանուր պիճակը լաւ է, մասնաւոր թիթեղեայ տուփի մէջ է : Բայց լաւ է որ զուրս էլլէ, ող, արեւ տեսնէ :

Թիւ 22

Աւետարան քղրեայ
ի քու(իւն) ՊԵ (1356)

Փոքրագիր, ոսկեգօծ կազմով, շատ աւետարանիչներու նկարներ կան՝ զիմացի էջերը խորանաձեւ դարդերով, եւն : Գրչակթին, նկարներ, դարդեր՝ ոչ այնչափ նուրբ զրչի գործ, ձեռագիրը՝ շատ զործածութենէն սեւցած, մաշած : Սկիզբը իբր պահպանակ ունի երկու թերթ յունական ձեռագիր, եւ ազդ մը՝ ուր կ'ըսուի. «Վերանորոգումն Ուրբ Աւետարանիս արծաթեայ պատկերացն եղեւ արդեամբ եւ տրոք ողորմութեան Կամրկայցի մահտեաի Մայրամիշ», եւն, ՌՄԱ (1752) : Արծաթեայ պատկերը՝ իր շրջանակովը՝ տեղն է, բայց նուրբ գործ մը չէ :

Յիշատակարանը կ'ըսէ, «Փառք ... որ ժամանեցոյց զիս զանորհնատ զրիշս բղ-վարդան արեղայս յանդ Հանկ զսուրբ Աւետարանս տեսողն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Ի թվ(ին) ՊԵ (1356)» :

Յետոյ կայ ուրիշ յիշատակարան մը ևս, Աւետիս եւ Վարդան արեղաներու, և այդ յիշատակարանին թուականն այ է ՊԵԳ (1364), ութ տարի վերջ :

Ընդհանուր պիճակը լաւ է, թէեւ մէջը շատ մաշած եւ հինցած : Խնամքի եւ մանաւանդ ոգի կը կարծուի, մինչ զինքը փակեր են թիթեղեայ տուփի մէջ, եւ մղած կը հոտի :

Թիւ 22բ

Մաշտոց քղրեայ, քուակամ չունի

Միջակ զիբբով, մանր բոլորդիր, միջակ զրչութիւն, դարդերով եւ թունադրերով, տեղ տեղ անճաշակ եւ գունատ : Ձեռագիրը լաւ կազմուած է, թէեւ մէջը տեղ տեղ որդնակեր : Կողքը կահպատ տախտակեայ, պահպանակ չունի : Յիշատակարան ունի թէեւ, բայց երկու էջ կտրուած ըլլալուն համար՝ չի զիտցուի թէ ո՞ր թուականին է գրուած :

Այդ կրճատ յիշատակարանէն յետոյ՝ զարձեայ շարունակութիւն Մաշտոցի, զոր ապահովարար սխալ ապուցած են զրքին կազմողները : Սկիզբը տարբեր զրչէ գրուած է ի թվ(ին) փրկչին Ռ ... եւ (Ռ-էն վերջի գրերն արուած), եւ մերոյ Հայոց թվին Ռ...ին (հոս ալ արուած), որով յայտնի չէ գրչութեան թրականը, բայց ըստ ամենայն Հայաստանի ձեռնութեան՝ 16րդ դարու գործ է : Թուգթը՝ զեղեղորակ, սեւագոյն՝ շատ յաճախ զործածուիլէն :

Թիւ 23

Աւետարան քղրեայ, քուակամ չունի

Վերջին թուգթերն ինկած ըլլալուն՝ չի զիտցուի թէ ո՞ր դարու գործ ըլլայ, բայց Հայաստանի 16րդ դարու գործ է :

Թուգթերը բոլորովին սևացած են, յուսոնցազարդերը բոլորովին գունաթափած : Թէեւ Կորս աւետարանիչներուն նրկարները կան՝ բայց անճաշակ քաներ են, թող որ արուած՝ փճացած են արդէն : Խոնաւութիւնը շատ մեծ վնաս բրած է :

Կողքերը Հաստատուն՝ սովորական կազմով : Դիրքը միջակ, բոլորդիր, քիչ շատ ճաշակաւոր :

(Ասէլ վերջ ցուցակին գիրը կը փոխուի, որոշ է որ Հայր Արսէն Ղազիկեանի գիրը չէ - Ծան. 8. Ք.) :

Թիւ 23բ

Աւետարան քղբեայ
ի բու(ին) ՌԶԲ (1633)

Դիրքը միջակ, բոլորդիր, բայց զործածութենէ սեւցած: Ակիզը կանոնական սիւները կը պակսին: Աւետարանիչներուն կարները, յարակից խորանածե կամարով եւ յուսանցադարձերով, թէեւ կադմուելու տուն կտրուած: Արշտակարանը կ'ըջ: Պրեքաւ գիրս թվ(ին) ՌԶԲ (1633):

Կողքին վրայ արծաթեայ քանդակուած պատկերը կայ Յիսուսի՝ արծաթ չըջանակի մէջ: Ընդհանուր վիճակը լաւ է, եւ այս եւս մասնաւոր թիթեղեայ տուփի մէջ, ուր խոնաութիւնը կը թագաւորէ:

Թիւ 23գ

Տաղարան քղբեայ. բուական չունի

Միջակ դիրքով, զեղնորակ թղթեայ, կողքը կաշկապատ տախտակայ: Ակիզըները խաղերը սեւ են, վերջը կը սկսին կարմրել. թէեւ ուրիշ զոյնով եւս խաղեր մըն ալ կան մէջերը, զծուած նոյն ինքն օրդերէն:

Ընդհանուր վիճակը լաւ է, թէեւ ճարտար գրչի զործ մը չէ: Մէջը կան յուսանցադարձեր եւ մեծ գրեր, բայց անճշակ են, զոյններ ալ խեղճցած: Յիշատակարան չունի: Կողքին վրայի արծաթեայ չըջանակը եւս վերցուած. հետքերը կան:

Թիւ 24

Աւետարան քղբեայ
բուականը կը պակսի

Մեծադիր, երկիջեան, կոկիկ գրչութիւն, իւրաքանչիւր Աւետարանի սկիզբի դարձանակը կ'ըջըր բոլորովին աւրուած, ինչպէս նաեւ ամբողջ ձեռագիրը շատ

զործածելէն, խոնաութենէն մաշած եւ աւրուած: Յիշատակարան ունի, բայց կը պակսի վերջի մասը, որով յայտնի չէ թուականը, բայց հասնարար 14րդ դարու զործ է: Պաշտական չէ, ինչպէս նաեւ Աւետարանաց յատուկ կանոնները, եւն. ամէն ինչ կը պակսի. ուղղակի Աւետարաններէն կը սկսի, բայց այն եւս առաջին էջը բոլորովին սրբուած, եւ վրան նոր գրչով «Գիրք ծննդեան», եւն. զործած:

Կաղմը՝ հաստատուն, կաշկապատ տախտակայ, կողքին վրայի դարձերը հանուած տարուած են: խոնաքի կը կարօտի:

Թիւ 25

Մաշտոց (Քահանայաթագ) քղբեայ
ի բու(ին) ՊԿ (1411)

Չարդապիր, զարդ բոլորովին կը պակսին՝ թէ՛ սկիզբը, թէ՛ մէջը: Առակաց գրքին «Իմաստութիւն» բառին Ի գիրը պարսոյ թողուած է, եւ այնպէս մնացած է: Բոլորդիր, անարուեստ գրչութիւն: Շատ զործածուելէն՝ մաշած ու սեւցած: Իսկ մէջերը տեղ տեղ օրդերն իրենք զարդեր են ձեւացուցած՝ ծակեկելով թուղթերը: Կողք ունի եւ հաստատուն է, իսկ Ի վերջն ունի յիշատակարան, ուր կ'ըսուի:

«Կատարեցաւ քահանայաթագ ձեռամբ . . . Պողոս սուտանուն քահանայի եւ ծնողին իմոյ Մատթէոս քահանայի . . . արդ խոշորութեան եւ սղայանաց եւ գրչափող գրիս մի՛ ձեղաղբէք, զի կար մեր այսչափ էր: Գրեցաւ թվ(ին) Հայոց ՊԿ (1411) եւ յունիս Իե (25)», եւն.: Արդէն տէր Հայրն ինքը կը խոստովանի:

Թիւ 26

Մաշտոց (քղբեայ), ՌԶԲ (1673)

Միջակ գիրքով, նոսրգիր, կարմիրով խառն (տուն գլուխ, ալբուրիս, եւն.), չարականներուն վրայ խաղերով, սովոր-

րական զարգացումը, կոկիկ գրչութեամբ. թուղթը հաստ եւ լաւ պահուած:

Սկիզբը ստացողի յիշատակարանը կայ: Կազմը հաստատուն տախտակ եւ կաշի, բայց կաշին լաւ կազմուած, Վրաց խաչով եւ շուրջը գեղեցիկ զարդարով, նոյն ինքն կաշիին վրայ աշխատուած: Թ(իւ) 18 ձաշոց զրքի նման, միեւնոյն զարդերն են որ հոս եւս կան: Յարզ մը չի կրնար ունենալ իւր ձեռագիր:

Թիւ 26բ

Աւետարան քղբեայ, ի քու(իմ) ԶԳ (1454)

Միջակ զիրքով, բոլորգրով, գրչութիւնը ճարտար. չորս ակտարանիչներու նկարները կան համապատասխան խորաններով եւ լուսանցքի վարդերով, շատ ճաշակաւոր եւ քնտիր ոճով. սկիզբն ալ կան կանոններու տախտակները: Ունի մասնաւոր յիշատակարան, ուր կ'ըսուի, ի մէջ այլոց.

«Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ի ԶԳ (1454) ամին ձեռամբ յոյնամեղ եւ տարտամ ողւոյ զրչի Մինաս էրեցուն», եւն.:

Սկիզբն ու վերջը կան երկերկու թուղթեր՝ իւր պահպանակ՝ երկաթապիր աւետարաններու, շատ հին ձեռագիրներ՝ հոյսկապ զրչութեամբ: Ընդհանուր վիճակը լաւ է, բայց խոնաւութիւնը երթալով կը նուազեցնէ յարզը: Պատուական գործ:

Մանօթուրիմ Թ. Քիւրտեանի - Ձեռագրիս յիշատակարանը՝ ճարտարակուած է տւելի ամբողջութեամբ, նախ՝ «Ճանդէս Ամսօրնայ»-ի մէջ, 1903, էջ 341. եւ անկէ ալ Լ. Ս. խաչիկեանի «ԺԵ. դարի հայերէն գեղարվեստի յիշատակարաններ» (1451-1480) գործին մէջ, թիւ 60, կամ էջ 47-48, ուրկէ առնելով տակնորդ չեմ նկատեր հոս հրատարակել:

«Գրեցաւ ի թվականութեանս Հայոց ԶԳ (1454) ամին, ձեռամբ (յոյնամեղ եւ տարտամ ողւոյ) զրչի Մինաս երեցուն, ի

նահանգիս Տիրերկոյ, ի վանք Խոնոնայ-լիոյ, ընդ Հովանեաւ սուրբ Լուսաւորչի եւ սուրբ Աստուածածնի... ի յառաջնորդութեան եւ ի վերադիտողութեան տէր Յովհաննիսի, եւ ի հայրապետութեան տեառն Կարապետի, եւ ի միւս Հայրապետութեան Արեւելեան կողմանց՝ տեառն Գրիգորի»:

Թիւ 27

Փոքր աղբիւր Մաշտոց քղբեայ,

ի քու(իմ) ՌԺԷ (1568)

Փոքրաղիւր, բոլորգիր, անվարժ գրչութիւն: Շատ խղճ վիճակի մէջ՝ բոստ ամենայնի, որդնակեր, խոնաւութենէ վիճացած, յունատուած: Վերջին էջին մէջ ստացողի յիշատակարանը կայ, գրութեան ի թուին Ռ. ու. ԺԷ (1568): Բուն գրչութեան այդ թուականը տալ չեա յօժարիւր՝ զրին խղճութենէն ու ձեւէն. սակայն այդ դարու գործ է:

Կողբը կաշեպատ տախտակ է, բայց չէ կրցեր պաշտպանիլ որ ներքին էջերը խոնաւութենէ կարենային պահպանել: Անարժէք գործ:

Թիւ 28

Գանձարան քղբեայ,

ի քու(իմ) ՌԿԻ (1613)

Փոքրաղիւր, բոլորգիր, քաջայաւած վիճակի մէջ: Մէջը երկու գրչութիւն կայ. առաջին գրիչը կոկիկ եւ ճաշակաւոր է: Սկիզբը կը պակսի շատ րան: Կազմէն իսկ յայտնի է որ շատ էջեր վերցուած են, եւ հին գրչութիւն է: Յիշատակարան մ'ունի, ուր կ'ըսուի, «... յանկ հանալ հիւծելոյս յանցանաբ հո գորութիւն անպիտան Ղուկաս իրիցոս զտաղերն գրեցի, եւ կապեցի զ(ուր) գիրքս: Ի թվականս Հայոց ՌԿԷ (1613)», որմէ կը հետեւի թէ ինք գրեց, նորոգեց է ՌԿԻ (1613)ին. րան է՝ ձեռագիրը աւելի հին է, եւ այս յիշատակարանին գրչութիւնը տարբեր է նախնեթացէն: Իսկ զտաղերն գրեցի» րանին ալ ճիշտ է, որովհետեւ

այդ յիշատակարանին վերջը կը սկսին տաղերը խաղերով, նոյն Ղուկաս երգէին գրուած: Խնդհ վիճակ:

Թիւ 29

Տաղարան քղրեայ, բուսկան չունի

Միջակ դիրքով, բոլորովին սեղսած եւ քայքայուած՝ եկեղեցւոյ մէջ յաճախ դորձածուելէն: Յիշատակարան չունի: Տեղ տեղ՝ ինչպէս սկիզբն ալ՝ կան զարդեր, բայց բոլորովին գունաթափած: Գրչութիւնը Լթիւ ոչ այնքան բնտիր՝ բայց արհամարելի ալ չէ: Զեռագրին ընդհանուր վիճակը դժաշուցիչ չէ: Կազմելու կապելու կարող է: Վերջը պահպանակ ունի՝ մաղաղաթեւայ երկաթագիր էջ մը: Ժե. դարու գործ է հաւանորէն:

Թիւ 30

Յայտնաւորք քղրեայ, անքուական

Գրիչն է Պօղոս Երէց:

Առաջին էջին պատկերը կը պակսի. կը սկսի ցանկով, խորանաձեւ կամարը կայ յարակից լուսանցքի զարդովը: Ճաշակուոր են, գեղեցիկ պրշութեամբ: Յայտնութեան զոյսուն սովորական նկարը, Աստուածածին՝ Յիսուս մանուկը գիրկը, եւ Երեք մօղերը ծնրագիր: Աստուածածին զէմքը քերուած: Գիմացի էջը առաջինին նման՝ խորանաձեւ յարակից զարդովը, նման ճաշակով: Կայ դարձեալ Յարութեան պատկերը, բիշ մը աւրուած, դիմացի գեղեցիկ էջովը: Լուսանցքին վրայ տեղ տեղ սուրբուր տնկարներ կան:

Մեծագիր, կաշեպատ տախտակեայ, մօթուր պրշութիւն, զարդերը խիստ ճաշակաւոր, զոյները եւ ոսկին անվթար. նկարները բիշ շատ աւրուած՝ տխմար ձեռքերով: Յիշատակարան չունի, միայն տեղ տեղ կը յիշուի ստացողի անունը, «Մահտեսի Վարդէհուրին», եւ. Եւն... Եւ «բարձրամեղ պրշի Պօղոս Երեցուն»:

Եկեղեցւոյն մէջ շատ պարծածուելէն՝

բիշ շատ խաթար վիճակ ունի. պէտք է կաղմել եւ հաստատել եւ խնամքով պահել: Ժե. դարու գործ է հաւանորէն: Պատուական գործ:

(Հոս պիւրը կը փոխուի եւ դարձեալ Հայր Արսէն Ղազիկեանի գրչէն - Ման. Յ. Ք.):

Թիւ 31

Յայտնաւորք քղրեայ

ի բուին Ռձիկ (1718)

Գրիչ՝ Արուիթն քահանայ:

Յիշատակարանը կ'ըսէ. «Արդ զրկցաւ սա ձեռամբ մեղապարտ անարժան եւ անպիտան փցուն գրչի Արուիթն քահանային յանցաւորի: Ի թվականութեանս Հայոց Ռձիկ (1718), ի քաղաքն Կեսարիոյ եւ ի դեպն որ կոչի Եւպատա»:

Հսկայ ձեռագիր, հաստամետ * Եւ ամրակառոյց, կաշեպատ տախտակեայ, հաստ եւ բնտիր թղթի վրայ: Սկիզբը կը պակսի ցանկը, անոր տեղ պարագ թուղթեր են ձցուած: Նկար ալ չայ, կայ խորանազարդ էջը, յարակից զարդով՝ ճաշակուոր եւ բնտիր գրչի գործ. միայն խորանին մէջի նկարը անզգամ եւ անպարիշտ ձեռքով մը հանուած եւ տեղը ճերմակ թուղթ կպցուած: Սոյն առաջին էջին ներքեւ գրուած է. «Արհնեա Հողիդ սուրբ Աստուած ճշմարիտ եւ աջողակ զոյսուն ձեռաց ծառայա քո անիմաստ Պօղոս զպրիս եւ հան աւարտ դրսկրսեայ իմ»:

Կ'երևի ծաղիկոյն է սոյն Պօղոսը: Ընթացքին մէջ կան լուսանցազարդեր եւ տեղ տեղ նկարներ ալ՝ լուսանցքին վրայ, ճաշակաւոր եւ համաչափ դժաւորութեամբ: Պատուական եւ մեծղի գործ: Ընդհանուր վիճակը լաւ է, միակը գուցէ, որ լաւ է մնացած:

Մանօրութիւն Յ. Քիւրտեանի. - Յիշատակարանս հրատարակած է Բարդէն Մ. Վ. Կիւլէսէեան իր «Կոյստ Յովհաննէս Պատրիարք» (1904, Վիեննա) գործին

մէջ, էջ 123-124, և անկէ առնելով Աբ-
լակ Ալսոյաճեան իր «Պատմութիւն Հայ
Կեսախիոյ» Բ. հատորին մէջ, էջ 1885-Ը,
ուր կը ծանոթագրէ «պաշտած Կ. Պոլ-
սոյ Ազգ. Մատենադարանը»: Ասիկա
ծիւտ չէ, քանի որ նախ Հայր Ղազիկեան
Հայաթիոյ Ս. Լուսաւորչի ձեռագրաց
շարքին տեսած՝ է, յետոյ Բարդէն Սրբ-
րադան Կիւլէսէրեան՝ Ազգ. Մատենադա-
րանին իր հրատարակեալ (Անթիլիաս,
1961) ձեռագրաց ցուցակին մէջ այս
Յայմատուրքը չէ նշանակած կամ ցու-
ցակագրած: Հոս կ'արտադրեմ յիշատա-
կարանը, աւելի ընդարձակ:

«Արդ գրեցաւ սոս ձեռամբ մէկապարտ,
անարժան և անպիտան և փցուն գրչիս
Արուիին քահանային յանցաւորի, ի թը-
ւականութեան Հայոց ՌձԿէ (1718) ի
քաղաքն Կեսարիոյ և ի վեռոյն որ կոչի
Եւպատա, ի զուռն Սրբոյն Ստեփանոսի
Նախափայլին և Սրբոյն Սարգսի Զօրա-
վարին և արոյն Մերկերիոսի գինաւորին
և Սրբոյն Գէորգեա և Թէոփորոսի զօ-
րավարացն, ի հայրապետութեան Տեառն
Աստուածատուր կաթողիկոսի և յեպիս-
կոպոսութեան այսմ նահանգիս և առաջ-
նորդ Սահակ վարդապետ»:

«Արդ աղաչեմ դամենայն դասս քահա-
նայից, որք հանդիպիք այսմ՝ լուսազարդ
մատենիս, յիշեալիք ի մարբափայլ յա-
զօթս ձեր գլերոգրեալսն. Կեսարացի և
յաւառն Սանճիսոնցի մահտեսի Պօղոսն
և որդեկիր մահտեսի Սարգիսն և զա-
մենայն ազգայինսն: Որ ստացաւ զսուրբ
գիրքս ի հայալ յընչից իւրոց և ետ լի-
շատակ՝ Բիղանդիոյ և իւր գէմն Ղա-
յաթայ՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Էկեղեց-
այն»:

«Գարձեալ աղաչեմ դամենեսեան յիշել
ի մարբափայլ յազօթս ձեր՝ դմեղաւոր
հոյ և զԹէլս և զԺնուսն իմ զՊարսամ
քահանայն և զԵւա իրիցիկինն, և զկողա-
կիցն իմ և զԿոստիլի Էրէցիկինն և զուսու-
ցիւն իմ զԱստուածատուր քահանայն և
յսորս Եւա իրիցիկինն, որ քաղում աշխա-
տութեամբ սնուցին և ուսուցին զիս...»:

«Այլ և զօրինակիս շնորհոյն, վարդա-
պետ կամ Էրէջ, որ զօրինակն շնորհցին
և ստացան իւրեանց բարի անուն և բա-
րի յիշատակ»:

«Քահանայք և Սարկաւադուներ, առանց
դաստառակի զգիրքս մի՛ պահէք և ի մո-
մէ պատրաստ լոնեցէք և զկարգաւն ան-
փոյթ մի՛ առնէք, զի գրեալ է թէ տեսա-
սէր չէ զրկած ի պսակաց մարտիրոսաց,
այլ է հաղորդ նոցին փառաց առանց դա-
նից և տանջանաց...»:

ԲԻՒ 32

Յայմատուրք Բղրիայ
ի Բուխն Ռ ԶԳ (1725?)

Ունի ընդարձակ յիշատակարան՝ ուր
կ'ըսուի. «Գրեցաւ և աւարտեցաւ արոց
պատմութիւնս որ կոչի յայմատուրք, թը-
վականիս Ռ. ԶԳ, ի քաղաքն Ստամպոլ.
ընդ հովանեաւ սուրբ Նիկողայոսու. ի
զպրատանն վարպետիս, որ մէկ զգիրս
ուսոյց որ և ասաց զայս...»:

Ռ. էն վերջի գիրք անորոշ է. Լթէ ճ
համարուի՝ 1725 թուականը կ'ըլլէ: Առ-
կէ զատ, յիշատակարանին մէջ իմաստա-
ոտանաւոր մը կայ, քստ որում՝ Թակոր
անուան մէջ փախուած է Էդեր թուակա-
նը. (Ե-300, Ա-1, Կ-60, Ո-600, Բ-2, 963
հաւասար 1511): Գուցէ բուն թուականը
չըլլայ աս, բայց ինչ որ ալ ըլլայ, քիչ մը
առաջ՝ կամ քիչ մը վերջ՝ այդ թուա-
կաններու զործ է:

Սկիզբը պակասաւոր է, պատկերազարդ
չկ'ը, այսինքն Լուսաւորչի սովորական
նկարն ու զիմացի խորանձեւ դարդը և
յարակից լուսանցազարդ՝ մազադաթի
վրայ ըլլալուն: Յաներ տարեր ևն ան-
ղգամօրէն: Յայտնութեան պատկերը տե-
ղըն է, զիմացի էջով՝ մազադաթի վը-
րայ: Փեղեցիկ ու ճաշակաւոր գործ՝ եր-
կուքն ալ, բայց պատկերազարդ էջը խա-
թարուած ու վնասուած է. կայ նաեւ
Յարութեան պատկերը, նոյնպէս մազա-
դաթի վրայ, և նոյն նման վնասուած:
Իսկ զիմացի էջին մէջ կայ պատկեր մը՝

Յիսուսի նկարը, քովն ունենալով երկու
հրէշտակներ, շատ զեղեցիկ, եւ յիշաւի՝
շնորհակալ ըլլալու ենք որ առաջին էջի
մագաղաթները առնող տանող անպարիշտ
ձեռքը՝ չէ տարած այս էջերը եւս, կամ
այդ նկարը չէ մկրտած տարած։ Թէ՛
այս խորանաձև էջը, եւ թէ՛ յարակից
դարդը տեղ տեղ մնասուած են խուժու-
ղութ ձեռքէ։ Լուսանցադարձերը՝ րազ-
մաթիւ, ճաշակաւոր եւ վարպետ ոճով։
Յանկը վերջն է դրուած։

Ձեռագիրն ընդհանուր միճակը լաւ է,
թույլիք հաստ եւ տեղ տեղ սեւեռած՝ գոր-
ծածուիկէն։ Ընտիր գործ։

Թիւ 33

Յայսմաուրբ քղքեայ

ի րուին ՌՃԻԳ (1674)

Մեծագիր, հսկայ գործ, հաստ թույլթ,
հաստատուն կազմ ու կողք։ Սկիզբը կայ
ցանկը, զյիսակները՝ կարմիրով, ինչպէս
նաեւ զյիսակարդութիւնները։ Յետոյ կը
սկսի Յայսմաուրբը։ Ընտիր մագաղաթի
վրայ։ Ս. Լուսաւորչի պատկերը զղեւ-
տաւորեալ, առջեւ Տրդատ Թապաւորը՝
խողին կրթնած, ծնրադիր, ձեռուին ծալ-
լած, ժինչ Լուսաւորիչը կ'օրհնէ զինքը։
Յաջորդ էջն ալ ընտիր մագաղաթ, խո-
րանաձև զեղեցիկ դարձերով, ինչպէս
նաեւ տող մը ամբողջ զեղեցիկ թռչնա-
դրերով։ յուսանցքին վրայ վերէն վար
զեղեցիկ դարձ մը, թէ՛ պոյները եւ թէ՛
ոսկիները լաւ պահուած են, միայն տեղ
տեղ քիչ մը աւրուած։ Յաջորդ էջերը
թղթեալ են, տարբեր գրչութեամբ։ Մա-
ղաղաթեալ էջերուն պիտի քիչ մ'աւելի
փոքր է՝ բայց շատ ընտիր։ Խրաքանչիւր
վկայարանութեան նախատառերը թրուչ-
նադիր՝ յուսանցքին վրայ յարակից զե-
ղեցիկ պարզով մը, եւ կամ նոյն սուրբին
նկարով, բայց տեղ տեղ աւրուած, մա-
նասնիկ գլուխները, անշուշտ տխմար
դիտումով։

Երկրորդ մասը կը սկսի նոյնպէս երկու
մագաղաթ թերթերով։ Առաջին թերթին

առաջին էջը պարապ է, ինչպէս էր նաեւ
ձեռագրին սկիզբը. երկրորդ էջին վրայ
մոգերու երկրպագութիւնը. բայց թէ՛
Յիսուս մանկան եւ թէ՛ մոգերուն գէճե-
րը անզգամօրէն աւրուած՝ աղճնոտեալ,
տղէտ եւ անպարիշտ ձեռքերէ։ Դիմացի
էջը նոյնպէս մագաղաթ՝ զեղեցիկ դարձե-
րով, խորանաձև, թռչնադրերը նոյնպէս
զեղեցիկ, յուսանցքի դարձն ալ նոյն ճա-
շակով։ Այս մագաղաթեայ երկու էջե-
րուն զիրենք ալ նոյն են սկիզբի մագա-
ղաթեայ էջերուն պիտեւուն հետ. կ'երեւի
այդ էջերը աւելի ճարտար գրչի են գրել
սուեր. թէ՛ եւ միւս գրչին ալ ճարտար է,
առանց զուցէ առաջինին նորութիւնն ու-
նենալու։

Երրորդ մասը Ձատիկէն կը սկսի. կայ
սկիզբը Յիսուսի Յարութեան պատկերը,
բոլորովին փճացած, զիմացը նոյն ճաշա-
կով եւ զեղեցիկ զրէութեամբ խորանա-
ձև նկարը՝ թռչնադրերով եւ յուսանցքի
պարզով. առաջին գրչին գործն է. հոս,
սակայն, մագաղաթի վրայ չէ, այլ
թուղթի։

Ձեռագիրը թէ՛ եւ հաստատուն կողք ու-
նի, կաշեպատ՝ ամուր տախտակեայ,
բայց քիչ շատ քայքայուած է, եւ պէտք
ունի նորոգութեան։ Մասնաւոր պահպա-
նակ չունի։

Ի վերջն՝ ունի կանոնաւոր Յիշատակա-
բան, ուր՝ ի մէջ այլոց՝ կ'ըսուի. «...
Արդ յանկ Երեալ աւարտեցաւ սուրբ մա-
տեանս որ կոչի այսմաուրբ։ Ի թվական
նութեանս Հայոց ՌՃԻԳ (1674), ի մայ-
րաքաղաքն Կոստանդինուպոլիս... ձե-
ռամբ... Ակնցի Ղազար իրիցու»։

Թիւ 34

Յայսմաուրբ քղքեայ, անբոսական

Թիւ 30 Յայսմաուրբին յարեմմանը՝
բոտ ամենայնի։ Գրչիչը՝ Նայն Պօղոս Ե-
րէցն է, որ տեղ տեղ կը յիշատակէ ինք-
զիւն՝ գրչի ստացողներուն անուան
հետ։ Կարգաւ՝ այդ Յայսմաուրբի մասին

դրուածք: Նոյնպէս ժէ. դարու պործ է . թէ՛ և մասնաւոր յիշատակարան չունի ևւ յիշատակուած չէ թուականը: Ասոր քսկիցրը կայ Տրդատի պատկերը՝ անուաման խողը հետը ունենալով: Նոյն ձեռագրին բոլոր նկարադրութիւնները կը յարմարին ճիշտ ասոր այ. միևնոյն ոճով պրուած, նոյն ճարտարութեամբ ու ճաշակով նրկարուած՝ թէ՛ պարզերն ու թէ՛ լուսանցքի նկարները, որոնք տեղ տեղ կտրատուած հանուած, տեղ տեղ ալ աւրուած՝ ազատուած են անպատմ ևւ տխմար ձեռքերէ: Ընտիր Գործ:

Թիւ 35

Աւետարան մագաղաքեայ
ի բօւին ՈՂԲ (1223)

Ներկայ ձեռագիրներուն մէջ՝ ամէնէն հոյակապը, թէ՛ իրը հնագոյն անոնց մէջ, ևւ թէ՛ իրը ամէնէն զմայլելին:

Փոքրադիր, մեծարուեստ, մանր բոլորդիր, բազմաթիւ նկարներով: Սկիզբը 12 տարեկաններ. մէջն այ՝ բացի աւետարանիչներուն պատկերներէն՝ ուրիշ բազմաթիւ պատկերներ ևւ. ամէնքն ալ դարուն ճաշակով ու ճարտար պրիւթեամբը:

Յիշատակարանը կ'ըսէ. «Արդ եղև զրա պրութեան սորա ի թուականիս Հայոց ի ՈՂԲ (1223) ընդ հովանեաւ սուրբ տաճարիս Տիրամարն, յանապատիս Թագլորի վանք, ընդ հովանեաւ Մամեսդիոյ...»:

Կողքը երկու կողմն ալ ոսկեղօծ՝ արծաթապատ նկարներով: Կողքն ալ զմայլելի է: Ձեռագիրը կը հանգչի թիթեղեայ տուփի մէջ...:

Իր պահպանակ՝ ունի երկերկու թերթ երկաթադիր աւետարանի էջեր, գեղեցիկ պրութեամբ:

Սթանչելի գործ:

Կր պակսի քիւ 36

Թիւ 37

Աւետարան քրքեայ, բուական չունի

Ամենափոքր գիրքով, զրպանի, գիրը նոսր է. գրութիւնը՝ վարժ. նկարներ ու զարդեր կան ամէնուրեք:

Յիշատակարան չունի. ժէ. դարու է, անչուշտ: Կողքը՝ արծաթապատ. սկիզբը կայ խաչկու թեան պատկերը, չորս անկիւնները խորհրդաւոր կենդանիներով: Նոյնպէս միւս կողմը. մէջտեղը խաչ, ևւ. ևւ.:

Կր պակսի քիւ 38

Թիւ 39

Խորիրդատետր քրքեայ
ի բօւին ՌՃԻԵ (1676)

Միջակ գիրքով, Երկիջեան, շատ դործածուած, որով ևւ քիչ մը քայքայուած: Էջերը սևեցած, մոմոտած. զարդ, ևւ. կը պակսի. նոյն իսկ սկիզբը չկայ, պարազ է թողուած, սպասելով ճարտար գրչի մը՝ որ չէ հասեր: Անոր տեղ հասեր են որդերը ևւ իրենց զարդերը ցուցադրած՝ հոս ու հոն: խոնաւութիւնն ալ սկսած իր աւերը առաջ կը տանի:

Յիշատակարանը կ'ըսէ. «Գրեցաւ խորհրդատետրս ի թականիս Հայոց ՌՃԻԵ (1676) ամի, ամսունն յունիսի ԻՐ (28): Ձեռամբ... Ջաքարեա երիցու...»:

Թիւ 40

Խորիրդատետր քրքեայ, անբուական

Միջակ գիրքով, բոլորդիր, գեղեցիկ պրութեամբ, ընտիր զարդերով ևւ թրոշնադիրով: Ձեռագիրը, սակայն, շատ դործածուելէն՝ բոլորովին խեղճ վիճակի մէջ: Ժէ. դարու գործ է. հասանաբար թիւ 33 Յայմատուրքի ճարտար գրչին պործը կ'երևի: Թուղթը բարակ բլրալուն՝ երկու էջ իրարու փակցուցած ևւ

այնպէս գրուած է : Բարերար ձեռքերու
օգնութեան կը կարօտի, որպէսզի կարե-
նայ զեռ շատ տարիներ ապրի :

Կը պակսին քիւ 41-53

Թիւ 54

Տօնացոյց քղրեայ, անբուական

Փոքրազիր, նոտր գրով, ճաշակաւոր
գրչի գործ : Ի վերջն կան ժամամուտներ,
Թաղաւոր յախտահաններ, Գանձեր, Եւ
այլն... Շատ կոկիկ գրչութիւն, բայց
խոտաւութենէ Եւն... փճացած : Յիշա-
տակարան չունի :

Կը պակսին ք(իւ) 55-60

Թիւ 61

Աւետարան Ի քուին ՌՃԻԱ (1672)

Փոքրազիր, Երկիջեան, բոլորզիր, նը-
կարներ կան մէջը՝ յուսանցքներուն վը-
րայ, բայտ նիթոյ Աւետարաններուն : Սո-
վորական գրչութիւն. նոյնպէս զարդերն
ու նկարները : Թուղթը՝ զեղնաւորթ :
Յիշատակարանը կ'ըսէ :

Գրեցաւ յաշխարհիս թուրքաց Եւ
Ի յերկիր Պոլիս : Ի թվարեութեան
առաջնագեղան տոմարին ՌՃԻԱ (1672),
ձեռամբ Պէկլըր զպրիս Դիվրիկցի...»
Եւն. :

Կաղմը՝ Հաստատուն, կաշեպատ տախ-
տակ կողքով, մաքուր պահուած, ըստ
թուականին :

Անքիւ

Ժամագիրք Ի քուին ՌՃԻ (1655)

Անծաղիր, Երկիջեան, բոլորզիր, բամ-
բակեայ թանձր թուղթ, մաքուր գրչու-
թիւն, զարդերով Եւ նկարներով :

Ակիլըր կայ «Հրաժարիմք»ը, Եւ ամ-
բողջ Տօնացոյցը : Հաստատուն կաղմ,
բայց շատ գործածուելէն՝ մաշած Հին-

ցած : Գրուած է Ի Կ. Պոլիս, «Ի Թուա-
կանիս Հայոց ՌՃԻ (1655) ձեռամբ...
Մարկոս ծառայիս» : Յետոյ կայ ուրիշ
յիշատակարան՝ ուրիշ գրչէ :

Վրան թիւ չկայ :

Անքիւ

Աւետարան Իւղաբերից
Ի քուին ՌՄԿ (1811)

Անծաղիր, չքեղ գրչութիւն, իւղաբե-
րից չորս աւետարանները : Յիշատակա-
րանը կ'ըսէ. «Յիշատակ է սոյն պատկե-
րաւոր Եւ մի կողմն արծաթապատ չքե-
ղազարդ իւղաբերից սուրբ Աւետարանս՝
Ղալաթիա սուրբ Լուսաւորիչ Եկեղեց-
ւոյն» :

Ամիրաներու բնծայ մըն է, որմէ կըր-
նայ Հետեւցուի թէ ինչ գեղեցիկ բլլալու
են պատկեր Եւ արծաթ՝ որ կը իշխին
յիշատակարանին մէջ : Բայց ափսոս որ
ձեռագիրը մերկ է մնացել այդ չքեղ զար-
դերէն Եւ մնացել է տկուր, սղորմելի
կողք մը մէջ :

Հոս կ'աւարտի Ղալաթիոյ Ս. Լուսա-
ւորիչ Եկեղեցւոյն ձեռագրաց ցուցակը,
պատրաստուած Հ. Արսէն Ղաղիկեանէ Եւ
իր մէկ անձանոթ օգնականէն, քանի որ
յարդելի Եւ վստասկաւոր Հօր գրչութե-
նէն տարրեր գրչութեամբ ցուցակագրու-
ած են քանի մը ձեռագիրներ (թիւ 23ք-
30) :

Ցուցակին վերջը՝ կազմէն անջատուած
թերթի մը վրայ, որ գետեղած եմ տե-
տրակին մէջ, իւր կէջ 23, կայ ձեռագրի
մը ցուցակագրութիւնը՝ դարձեալ Հ. Ա.
Ղաղիկեանի գրչէն. գոր հոս կ'աւարտա-
գրեմ :


Աւելցնել՝ Ղալաթիոյ Աղղ. Մատենա-
դարանի Հայ. Ձեռագրաց Ցուցակին

ռազդիրներուն մասին: Ասկէ տասնեակ մը տարիներ առաջ, ինքս ալ տեսայ եկեղեցւոյն ձեռագիրները նա մանաւանդ թիւ 35 մագաղաթեայ Աւետարանը, զոր գունաւոր յուսանկարեցի: Դժբախտաբար ձեռագիրները դարձեալ տուփերու մէջ, «գանձատան» մը մէջ փակուած էին: Եկեղեցւոյն քանդումէն վերջ՝ ձեռագիրները ինչ եղան, չեմ գիտեր: Կրնան Պատրիարքարան փոխադրուած ըլլալ եւ անկէ ալ Ղայաթիոյ նորակերտ Ս. Լուսաւորիչը:

Շ. Արսէն Ղազիկեան Ղայաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ ձեռագիրներուն թուահամարը կը հասցնէ 61. Եւ սակայն այդ 61 ձեռագիրները կորուստներ ունեցած են թիւ 61ը վերջէն համարով ձեռագիրն էր այս ժողովածոյին, եւ անկէ վերջ ձեռագիրներ չեն աւելցած, թէ եւ չենք պիտի որ է՛ր եւ ո՛վ թուահամար տուած է այս ձեռագիրներուն: Արդ Շ. Ղազիկեան պակաս կը նշանակէ չեւեւեալ թիւ ունեցող ձեռագիրները. 1-3, 6-15, 19, 36, 38, 41-53 եւ 55-60, ընդամէնը 35 ձեռագիր: Նոյն առեւն կը տրուին երբեմն տրուած թիւի մը զիմաց՝ 2, 3 ձեռագիրներ, որպէս են թիւ 17բ, 18բ, 20բ, 21բ, 21դ, 22բ, 23բ, 23գ, 26բ եւ երկու անթիւ ձեռագիրներ. ընդամէնը 11 ձեռա-

գիրներ, որոնք կրնան պակսող թուահամարով ձեռագիրներ եղած ըլլալ, եւ այսպէսով 61 ձեռագիրներէն 24 հատ պակսած կարելի է նկատել. ասով 1920 Յուլիա Յին Ղայաթիոյ Ս. Լուսաւորչի եկեղեցին կը գտնուէին 37 հայերէն ձեռագիրներ: Թէ ինչ ձեռագիրներ էին պակսածները, ընական է՝ ի վիճակի չեմ ըսելու եւ միայն ցաւալի իրողութիւնն է որ կ'արձանագրեմ:

Շոս հարց կը ծագի թէ ինչու դեռ եկեղեցիներու մէջ տարտղնուած կը մնան հայերէն հին ձեռագիրներ, որոնք չեն գործածուիր արարողութեանց առեւն, ու շատ անգամ կը մնան անխնամ, անկաղմ, լքուած, մարդկային տղիտութեան եւ նաեւ անարատնչութեան ենթակայ: Հարկաւոր է որ կեդրոնացուն որոշ ապահով եկեղեցիներու եւ կամ վանքերու մէջ. օրինակ, Կ. Պոլսոյ ձեռագիրները եկեղեցիներէն հաւաքելով՝ ապահով պահուելու են Կ. Պոլսոյ մէջ, եկեղեցական կեդրոնի մը մէջ, հակապէս եւ հրակողութեան տակ: Այսպէս, օր մը այլ-եւս րան պիտի չմնայ մեր ձեռագրական ժառանգութենէն, որ տարտղնեալ է եկեղեցիներու մէջ: Մեր եկեղեցական վերին իշխանութիւնները այլեւս գիտակից՝ կը յուսանք որ առաջին կ'առնեն նորանոր փճացումներու կամ կողոպուտներու:



A 3713

ՀԱՆ Հիմնարար գիտ. գրադ.



FL0070029

